

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2016



«ԻՐԱԶԵԿ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ»



ՄԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մեր առաքելությունն է բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը պետական և հանրային նշանակության ոլորտներում: Մենք սա համարում ենք ցանկացած ժողովրդավարական հասարակության էական և անբաժանելի բաղադրիչ:

Մենք միջոցներ ենք ձեռնարկում Հայաստանում մեղիա դաշտի կարողությունների զարգացման ուղղությամբ: Ավելին, մենք ինքներս իրականացնում ենք լրատվական գործունեություն ArmRusInfo ռուսալեզու լրատվական կայքի և ապատեղեկատվության դեմ պայքարող SUT.am փաստերի ստուգման կայքի միջոցով:

ԻՔՄ-ն իր գործընկերների հետ միասին պայքարում է Հայաստանում ընտրությունների որակի բարձրացման համար՝ ինչպես մասնակցելով ընտրությունների օրը դիտորդական առաքելություններին, այնպես էլ ազդելով դրանց նախորդող գործընթացների վրա:

Բոլոր տեսակի նյութեր պատրաստելու ընթացքում մենք առաջնորդվում ենք ժողովրդավարական արժեքների առաջխաղացմամբ: Մենք ոչ մի պարագայում չենք արդարացնի ագրեսիվ պատերազմները, մարդու իրավունքների ոտնահարումը, ինչպես նաև մարդկության կամ բնության դեմ ուղղված հանցագործությունները:

Մենք չենք ներկայացնում որևէ քաղաքական կուսակցության կամ այլ խմբերի շահեր:

«Իրազեկ քաղաքացիների միության» և նրա ստորաբաժանումների թիմերը ստանձնեցին մի շարք հանրային պարտավորություններ, որոնք Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված չեն: Մասնավորապես, մենք

ունենք բնապահպանական քաղաքականություն, որի նպատակն է նվազագույնի հասցնել կազմակերպության գործունեության արդյունքում վտանգավոր արտանետումները՝ նվազեցնելով էներգիայի սպառումը, ինչպես նաև թղթի օգտագործումը՝ օգտագործված թուղթը վերամշակման գործարաններ ուղարկելու միջոցով: Բացի այդ, մենք մեր միջոցառումները անցկացնում ենք և գրասենյակները վարձում ենք միայն այն շենքերում, որոնք հարմարեցված են անվասայլակով տեղաշարժվող անձանց համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անձնակազմ

Գործընկերներ և դաշինքներ

Գործունեության ոլորտներ

Ֆինանսավորում

ԱՆՁՆԱԿԱԶՄ



Դանիել Իսանիայան
Ծրագրերի տնօրեն



Տաթևիկ Քերոբյան
Նախագահ



Վահե Ղուկասյան
Գլխավոր խմբագիր



Կարեն Վարդանյան
Առաջատար մասնագետ



Փիրուզա Պետրոսյան
Գրասենյակի օգնական



Ռաֆայել Աֆրիկյան
Լրագրող



Անայա Մելքոնյան
Իրավախորհրդատու



Գնորգ Ղահրամանյան
Օգնական




Շուշան Հարությունյան
Թարգմանիչ



Քրիստինե Գորղյան
Թարգմանիչ



Զարուհի Պողոսյան
Թարգմանիչ



Տաթևիկ Բեգլարյան
Թարգմանիչ



Հրայր Մանուկյան
Տնտեսագետ



Աննա Փաֆուրչյան
Քաղաքագետ



Անդրանիկ Մանուկյան
Տնտեսագետ




Վահրամ Թոքմաջյան
Պատմաբան

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ



ԻՔՄ-ն ԵՄ Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի անդամ է, որի հայկական ազգային պլատֆորմն ունի ավելի քան 200 անդամ կազմակերպություն: Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումը (ԱԳ ՔՀՖ) նպատակ ունի հզորացնել քաղաքացիական հասարակությունը Արևելյան գործընկերության երկրներում, ինչպես նաև խթանել համագործակցությունը և փորձի փոխանակումը գործընկեր երկրների և ԵՄ-ի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև:



Մենք Անկախ դիտորդ քաղաքացիական դաշինքի անդամ ենք, որի շրջանակներում մենք իրականացնում ենք ընտրությունների դիտորդական առաքելություն: Մյուս անդամներն են՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, Մարտունու կանանց համայնքային խորհուրդը և Գորիսի մամուլի ակումբը:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

- Հետազոտություններ և վերլուծություններ
- Օգտակար նյութերի հրապարակում
- Տեսանյութերի հրապարակում
- Դասընթացներ լրագրողների համար
- Մարզային սեմինարներ
- Ընտրությունների դիտարկում և ընտրողների ուսուցում
- Փաստերի ստուգում SUT.am կայքի միջոցով
- Ռուսալեզու նորություններ ArmRusInfo լրատվական կայքի միջոցով

Հետազոտություններ և վերլուծություններ

Տարվա ընթացքում մեր թիմի կողմից իրականացված հետազոտությունները եղել են հետևյալ թեմաներով՝

- Զենքի գնման հայ-ռուսական գործարքին առնչվող խնդիրներ
- Մարդու իրավունքների խախտումներ Հայաստանում
- Ժողովրդավարության մակարդակի անկումը Հայաստանում
- Միջազգային հանրության վերաբերմունքը մարդու իրավունքների խախտման դեպքերի նկատմամբ
- Կոռուպցիային և դրա դեմ պայքարին առնչվող վիճակը Հայաստանում
- Պրոկրեմյան քարոզչությունը Հայաստանում
- Հայաստանի ինտեգրումը Եվրասիական տնտեսական միություն
- Ռուս-թուրքական հարաբերությունները և դրանց ազդեցությունը Հայաստանի վրա
- Էներգետիկ ոլորտ՝ էլեկտրականության, բենզինի և բնական գազի գնագոյացումը
- Հայաստանի պետական մարմինների կողմից այլ երկրներից ստացված դրամաշնորհները
- Ղարաբաղի հակամարտությունը
- Հայ-իրանական հարաբերությունները
- ԵՄ-Հայաստան հարաբերությունները
- Ռուսական անվտանգության մարմինների գործունեությունը Հայաստանում
- Քաղաքացիների անձնական տվյալների պաշտպանությունը Հայաստանում
- Հայաստանի արտաքին գործերի պատմությունը

Մեկ տարվա ընթացքում մենք իրականացրել ենք հետազոտական աշխատանքներ, և մեր բացահայտումների հիման վրա հրապարակել ենք 105 հոդված: Այս հոդվածները վերահրապարակվել են այլ առցանց լրատվամիջոցներում առնվազն 1750 անգամ:


Օգտակար նյութերի հրապարակում

2016թ. մենք հրապարակել ենք 7 օգտակար նյութեր, որոնք նախատեսված են լրագրողների և այլ հետազոտողների համար: Դրանք ներառում են միջազգային համաձայնագրեր, զեկույցներ և իրավական ակտերի պարզաբանումներ, որոնք հնարավոր չէ գտնել որևէ այլ աղբյուրներում:

Տեսանյութերի հրապարակում

Մեր մասնագետների կարևորագույն հետազոտական աշխատանքների հիման վրա ստեղծվում են անիմացիոն վիդեո նյութեր: 2016 թվականի ընթացքում պատրաստվել և հրատարակվել են 23 տեսանյութեր: Այդ տեսանյութերից 8-ը հրապարակվել են նաև ռուսերեն:

Մեր տեսանյութերը YouTube-ում ունեցել են ավելի քան 593.000 դիտում և լրացուցիչ 1,7 միլիոն դիտում Facebook-ում և այլ սոցիալական ցանցերում: Միայն YouTube-ում տեսանյութերի դիտման ընդհանուր տևողությունը եղել է 1.6 միլիոն րոպե:



Լրագրողների դասընթացներ

2016 թվականի ընթացքում Ծաղկաձորում կազմակերպել ենք «Արտաքին քաղաքականությունը և դրա լուսաբանումը» թեմայով 2 սեմինար-դասընթաց: Դասընթացների մասնակցել են հայկական առաջատար լրատվամիջոցների ընդամենը 46 լրագրողներ:

Սեմինարների ընթացքում ՀՀ ՊՆ խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը, ՀՀ Արտաքին գործերի նախարարության խոսնակ Տիգրան Բալայանը, ՀՀ-ում Եվրամիության պատվիրակության ղեկավար Ն.Գ. Պյոտր Անտոնի Սվիտալսկին, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ալեքսանդր Արզումանյանը և այլ փորձագետներ հանդես եկան ելույթներով և պատասխանեցին մասնակիցների հարցերին:



Ընտրական օրենսդրության ջատագովում


2016թ. ողջ ընթացքում Հայաստանում քննարկվել է ընտրական օրենսդրությունը: Քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում մենք մշակել ենք ՀՀ ընտրական օրենսգրքին ներկայացված հիմնական պահանջների ցուցակը և առաջ մղել դրանք:

Ջատագովման գործունեության շրջանակներում մենք խորհրդարանում մասնակցել ենք բանակցությունների 4 + 4 + 4 ձևաչափին և իրականացրեցինք շահերի պաշտպանության այլ մեխանիզմներ: Մենք նաև պաշտպանել ենք ՔՀԿ-ների մի շարք պահանջներ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում և ոստիկանությունում:

Ընտրությունների դիտարկում

2016 թվականի հոկտեմբերի 2-ին Հայաստանի մի շարք համայնքներում անցկացվեցին ՏԻՄ ընտրություններ: Այս ընտրությունները և դրանց հաջորդող ընտրությունները դիտարկելու համար մենք ստեղծել ենք «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքը Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի հետ համատեղ:

«Անկախ դիտորդ»-ը դիտարկում էր Գյումրիում և Վանաձորում անցկացվող ընտրությունները 200 դիտորդներից կազմված թիմով:



Փաստերի ստուգում Sut.am-ի միջոցով

2016-թ. նոյեմբերին մենք ստեղծել ենք SUT.am փաստերի ստուգման կայքը: 2016թ. ընթացքում կայքում 35 հրապարակում է արվել:

Ավելին, կայքը ոչ միայն հերքում է Կրեմլի ուղղակի քարոզչությունը, այլև պայքարում է այդ քարոզչության անուղղակի արտահայտումների դեմ: Վառ օրինակ է դեպքը, երբ հասարակության շրջանում այնպիսի տպավորություն ստեղծելու փորձ եղավ, որ Արևմուտքը մտադիր է ոչնչացնել ընտանեկան արժեքները Հայաստանում՝ նպաստելով ընտանեկան բռնության դեմ պայքարի օրենքի ընդունմանը:



Ընդամենը մի քանի շաբաթվա ընթացքում SUT.am- ը դարձավ հայտնի և ազդեցիկ լրատվամիջոց, որտեղ հրապարակումները միջին հաշվով 5-6 հազար դիտում ունեն:

Ռուսալեզու ArmRusInfo կայքը

2016 թվականի ընթացքում մենք առաջ ենք մղել մեր նորաստեղծ ռուսալեզու ArmRus.info լրատվական կայքը: Այն արդեն դարձել է լիարժեք գործող լրատվական կայք: Վերոնշյալ ժամանակահատվածում կայքում ավելի քան 3000 նյութ է հրապարակվել: Կայքը օբյեկտիվորեն լուսաբանել է ընթացիկ նորությունները Հայաստանում ռուսալեզու ընթերցողների համար, ինչպես նաև Հայաստանում տեղի ունեցող կարևոր զարգացումները օտարերկրացիների համար:



ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

2016թ. ԵԿԱՄՈՒՏԸ ԸՍՏ ԴՈՆՈՐՆԵՐԻ

Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամ (European Endowment for Democracy), Բրյուսել	\$2,213.00
Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան, Երևան	\$11,430.00
Ժողովրդավարության ազգային հիմնադրամ (National Endowment for Democracy), Վաշինգտոն	\$52,956.00
Ընդհանուր եկամուտ	\$66,599.00

2016 թ. ԾԱԽՍԵՐ ԸՍՏ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ

Սահմանադրական հանրաքվեի գործընթացի ժողովրդավարացում	\$2,213.00
Ընտրական օրենսդրության վերաբերյալ հանրային քննարկումներ	\$4,454.41
ԿԸՀ գործունեության մշտադիտարկում	\$5,446.65
Արտաքին քաղաքականության վերաբերյալ հանրային քննարկումներ	\$52,993.49
Ընդհանուր ծախսեր	\$65,107.55